

ՀՈԼԱՆԴԱՀԱՅ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

FEDERATIE ARMEENSE ORGANISATIES NEDERLAND

24 april comité

Adres: Weesperstraat 91 - 2574 VS Den Haag

Tel. 070 4490209

Website: <http://24aprilcomite.ontheweb.nl>

E-mail: april24committee@wanadoo.nl

K.v.K. 27264382

ՄԱՍԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Նիդերլանդները ճանչում են Հայոց Ցեղասպանությունը

Հաագա, 21 դեկտեմբերի 2004 - Հոլանդահայ Կազմակերպությունների Միությունը (Ֆեդերացիան) գոհունակությամբ հայտնում է, որ այսօր Նիդերլանդների խորհրդարանը միաձայն ընդունեց հայոց ցեղասպանության ճանաչման վերաբերյալ բանաձևը:

Տարիներ շարունակ հոլանդահայ համայնքը պահանջել է, որ Նիդերլանդների խորհրդարանը և պետությունը ճանաչի հայոց ցեղասպանությունը: Հատկապես անցած տարվանից Նիդերլանդների Եվրամիության նախագահության նախօրյակին և դրա ընթացքում Հոլանդահայ Ֆեդերացիայի «Ապրիլ 24 հանձնախումբը» հետևողական աշխատանք է տարել, որպեսզի Հայկական Հարցը լինի Նիդերլանդիայի խորհրդարանի պատգամավորների և լայն հասարակայնության ուշադրության կենտրոնում:

Բանաձևը ներկայացվել է Եվրամիության գազաթնաժողովի արդյունքների քննարկման ժամանակ: Այդ քննարկման ընթացքում համարյա բոլոր պատգամավորական խմբակցությունների ներկայացուցիչները հարցեր են ներկայացրել կառավարությանը՝ նախագահության եզրակացումների մեջ Հայոց Ցեղասպանության բացակայության մասին: Եվ դա հակառակ, ի միջի այլոց, Ֆրանսիայի և Եվրախորհրդարանի պահանջների և նույնիսկ հակառակ Նիդերլանդների արագորժնախարար Բոտի անձամբ կատարած հայտարարությանը, թե Հայկական Հարցը շարունակ առաջ է քաշվում թուրք գործակիցների հետ բանակցությունների ընթացքում: Խորհրդարանի մեծամասնությունը հարցադրում է կատարել այդ ուղղությամբ:

Բանաձևում կառավարությունից պահանջվում է «Հայոց Ցեղասպանության (Գենոցիդի) ճանաչումը հետևողականորեն և բացահայտորեն առաջ քաշել Թուրքիայի հետ երկխոսության ընթացքում»:

Բանաձևը ներկայացրել է «Քրիստոնեական Միություն» խմբակցության նախագահ պարոն Անդրե Ռաուվուտը: Բանաձևը պաշտպանել են խորհրդարանի բոլոր կուսակցական խմբակցությունները: